ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ, ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՏՐԻԴՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԼԻԼԻԹ ՂԱՋԱՆՉՅԱՆ

Տվյալ գիտական հոդվածում հեղինակը հանգամանորեն դիտարկում է օտարերկրացիների, փախստականների, ապատրիդների կարգավիճակի առանձնահատկություններն անձի իրավական դրության դրսևորման համատեքստում: Մասնավորապես բացահայտվում են այդ հասկացությունների միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք էական ազդեցություն ունեն անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի իրացման գործընթացում:

Բանալի բառեր – անձի իրավական դրություն, պետություն, հասարակություն, իրավունքներ, օտարերկրացի, ապատրիդ, երկքաղաքացիություն, փախստական:

Յուրաքանչյուր ժամանակակից ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ապահովման, պահպանության և պաշտպանության երաշխավորն է: Հետևաբար՝ այն պարտավորված է ստեղծելու համապատասխան պայմաններ և արդյունավետ միջոցներ, որոնք կնպաստեն անձի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի լիարժեք իրականացմանը: Հայտնի է, որ քաղաքացիությունն անձի իրավաքաղաքական կապն է տվյալ պետության հետ, որի ուժով նրա վրա տարածվում է պետության ողջ իրավունքի համակարգը, իսկ պետությունը պարտավորվում է պաշտպանել իր քաղաքացուն ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս[1]: Հետևաբար՝ օտարերկրացիների, երկքաղաքացիների, փախստականների և ապատրիդների կարգավիճակների ուսումնասիրությունն անկյունաքարային նշանակություն ունի տվյալ պետությունում և հասարակությունում անձի իրավական դրության իրացման առանձնահատկությունների բացահայտման գործընթացում: Հարկ է նշել, որ ***օտարերկրացին*** այն անձն է, որն ունի որոշակի պետության քաղաքացիություն, սակայն իր գտնվելու վայրի պետության քաղաքացի չէ[2]: Ավելին, գրեթե բոլոր ժողովրդավարական երկրներում օտարերկրացիները, պարտավոր են ենթարկվել ինչպես իրենց պատկանելության երկրի, այնպես էլ այն երկրի օրենքներին, որի տարածքում նրանք գտնվում են: Այսպես, ՀՀ-ում

---

[1] Տե՛ս **Այվազյան Վ.,** Մարդու իրավունքներ, 2-րդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2007, էջ 12-15:

[2] Տե՛ս ՀՀ օրենք «Օտարերկրացիների մասին» (16.01.2007թ.,) http://www. parliament.am/ l egislation.php?sel=show&ID=2861&lang=arm/12.11.2017/:

օտարերկրյա քաղաքացիների իրավական դրությունն (վիճակը) օրենսդրորեն հիմնված է տվյալ խումբ անձանց կացության կարգավիճակի վրա, որի շրջանակներում սահմանվում է կացության երեք կարգավիճակ՝ 1) ժամանակավոր, 2) մշտական և 3) հատուկ[3]:

Ուշագրավ է, որ անձի *ժամանակավոր կացության կարգավիճակը* Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվությունն է, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու ՀՀ-ի տարածքում որոշակի ժամկետով: Իր հերթին մշտական *կացության կարգավիճակը* ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվությունն է, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մշտապես բնակվելու ՀՀ տարածքում, իսկ *հատուկ կացության կարգավիճակ՝* ՀՀ Նախագահի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու ՀՀ տարածքում այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում[4]: ՀՀ-ում ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը, որոնց ձևերը հաստատում է ՀՀ կառավարությունը: Ավելին, ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն ՀՀ տարածքում մեկ տարի և ավելի ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ: Այդպիսի հանգամանքներ կարող են լինել. ա) ուսումը կամ բ) այս օրենքի 4-րդ գլխի համաձայն՝ աշխատանքի թույլտվության առկայությունը, կամ գ) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը, կամ դ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը, կամ ե) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, զ) ազգությամբ հայ լինելը:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդվ. 15-ի համաձայն՝ մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա ապա-

---

[3] Տե՛ս **Սաֆարյան Գ., Պողոսյան Ռ., Ղազանչյան Լ.,** Սիրիահայերի արդի իրավասոցիալական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2016, էջ 92:

[4] Մանրամասն տե՛ս ՀՀ օրենք «Օտարերկրացիների մասին» (16.01.2007թ.,) հոդվ. 15, http://www. parliament.am/l egislation.php?sel=show&ID=2861&lang=arm/12.11.2017/:

ցուցում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ ազգությամբ հայ է, կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն: Հարկ է նշել, որ վերոնշյալ օրենքի համաձայն, հատուկ կացության կարգավիճակ տրվում է նաև ազգությամբ հայ օտարերկրացիներին, ինչպես նաև ՀՀ-ում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների[5]: Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ, մշտական կացության կարգավիճակը՝ 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ), իսկ հատուկը տրվում է 10 տարի ժամկետով: Վերջինս կարող է տրվել մեկից ավելի անգամ: Ժամանակավոր և մշտական կացության քարտի վավերականության ժամկետը երկարաձգելու մասին դիմումն անհրաժեշտ է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ներկայացնել ժամկետը լրանալուց 30 օր առաջ: Հարկ է նշել, որ կացության կարգավիճակի համար պետական տուրքի վճարումից ազատվում են սիրիահայերը, քանի որ օրենքն ազատում է պետական տուրքի վճարումից ազգությամբ հայ այն օտարերկրյա քաղաքացիներին, որոնց ծագման երկիրն արտակարգ իրավիճակում է, ինչը սպառնալիք է քաղաքացիների կյանքի և առողջության համար, ինչպես նաև փախստականի կարգավիճակ ստացած անձի՝ ՀՀ ժամանող մերձավոր ազգականները (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր): Ավելին, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ արտոնագիրը կամ մուտքի վիզան՝ ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից տրված թույլտվություն է, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մուտք գործելու ՀՀ, տարանցիկ երթևեկելու ՀՀ տարածքով, գտնվելու ՀՀ-ում և դուրս գալու ՀՀ-ից՝ դրանում նշված նպա-

[5] Տե՛ս նույն տեղում, հոդվ.15, 17, 18 http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2861 &lang=arm/12.03.2016/; Նաև տե՛ս հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկ, Սիրիայից Հայաստան տեղահանված անձանց համար, Երևան, 2016, էջ 19-23:

տակներով, պայմաններով և ժամկետներում: Հայտնի է, որ վերջին ժամանակաշրջանում Սիրիայում ընթացող հակամարտությունը ստիպեց սիրիահայերին լքել իրենց բնակավայրերը՝ դրանով հիմք ստեղծելով ամբողջ աշխարհում միգրացիոն նոր հոսքերի առաջացման համար: Միևնույն ժամանակ ստեղծված իրավիճակը նպաստեց սոցիալական հակասությունների սրմանը, աղքատության խորացմանը, ինչպես նաև միջազգային ահաբեկչության ծավալմանն ու մարդու հիմնարար իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ոտնահարման խորացման գործընթացին: Հարկ է նշել, որ ՀՀ Նախագահի հրամանագրին համապատասխան և ՀՀ կառավարության որոշման հիման վրա ստեղծվել է տվյալ խումբ անձանց՝ սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով[6]: Ընդ որում ՀՀ տեղափոխված սիրիահայերի հիմնախնդիրների լուծմամբ զբաղվում է ՀՀ Սփյուռքի նախարարությունը: Ավելին, ՀՀ կառավարության № 951-ն (26.07.2012թ.) որոշման համաձայն, Լիբանանի, Իրաքի և Սիրիայի քաղաքացիները ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու կապակցությամբ առաջին անգամ ՀՀ քաղաքացու անձնագիր կարող են ստանալ այդ պետություններում գտնվող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում: Քաղաքացիության ձեռքբերման այդպիսի արագացված գործընթացը բացառիկ է և գրեթե չի կիրառվում այլ պետությունների կողմից, նույնիսկ ազգությամբ տվյալ պետության էթնիկական խմբին պատկանող անձանց նկատմամբ: Ավելին, ծննդականի բացակայության դեպքում ընտանեկան գիրքն ընդունվում է որպես հայությունն ապացուցող փաստաթուղթ: ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1390-Ն որոշման № 4 հավելվածի համաձայն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Հայ ավետարանական եկեղեցու, Հայ կաթողիկե եկեղեցու կողմից տրված մկրտության մասին փաստաթուղթը՝ հաստատված վերոնշյալ որոշմամբ նախատեսված կարգով, մկրտվածի կամ նրա ծնողի ազգությամբ հայ լինելու մասին նշումով, նույնպես ընդունվում է որպես հայությունն ապացուցող փաստաթուղթ[7]: Կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին,

---

[6] Տե՛ս ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագիր: ՀՀ կառավարության 14 հունվարի 2013թվականի № 9-Ա «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» որոշում, http:www.gov.am/09.02.2016/:

[7] Մանրամասն տե՛ս Իրավական օգնություն սփյուռքահայերին. Օտարերկրացիների կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, http:www.mindiaspora.am/am/ ognu-

որ ՀՀ Սփյուռքի նախարարությունը, որը ՀՀ նախագահի հանձնարարությամբ համակարգում է ՀՀ տեղափոխված սիրիահայերի հիմնախնդիրներին ու սիրիահայերի աջակցությանն ուղղված ծրագրերը, հսկայական աշխատանք է իրականացրել՝ ուղղված սիրիահայերի սոցիալ-իրավական խնդիրների լուծմանը: Վերջիններս ընդգրկում են կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ կրթական ոլորտ, առողջապահական ոլորտ, սոցիալ-տնտեսական ոլորտներ և այլն:

Քննարկվող խնդրի շրջանակներում անհրաժեշտ է պարզաբանել երկքաղաքացի, ապաքաղաքացի և փախստական հանդիսացող անձանց իրավական դրության (կարգավիճակի) առանձնահատկությունները: Այսպես, ***երկքաղաքացիությունը*** անձի իրավական կապն է երկու կամ ավելի պետությունների հետ, որն առաջանում է, որպես կանոն, երկրի օրենսդրությունում առկա հակասությունների, օրենսդրական բացերի հետևանքով: Երկքաղաքացիության կարգավիճակից հետևում է, որ երկքաղաքացին իրավունք ունի ազատ բնակվելու իր քաղաքացիության երկու պետություններում, միաժամանակ երկուսում էլ անցնել զինվորական ծառայության, հավատարիմ լինել այդ պետություններին (հարգել օրենքները, սովորույթները, կրոնը, մուծել հարկերն ու տուրքերը և այլն): Այսպես, անձը կարող է միաժամանակ լինել և՛ Բրազիլիայի, և՛ Արգենտինայի քաղաքացի: Հարկ է նշել, որ երկքաղաքացիությունն առավելապես տարածված է Լատինաամերիկյան երկրներում: ***Ապաքաղաքացի*** է այն անձը, որին ոչ մի պետություն չի համարում իր երկրի քաղաքացի[8]: Օրինակ՝ ապաքաղաքացի կարող է համարվել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձը, և որը չի կարող ապացուցել այլ երկրի քաղաքացիություն ունենալու փաստը: Ապաքաղաքացիության վիճակն առաջանում է այն ժամանակ, երբ անձն ինչ-որ պատճառներով կորցրել է իր մշտական բնակության երկրի քաղաքացիությունը, սակայն ձեռք չի բերել այլ պետության քաղաքացիություն: Ընդ որում կարգավիճակում գտնվող անձինք երբեք չեն կարող ակնկալել իրենց նախկին քաղաքացիական պատկանելության դիվանագիտա-

---

tyun_spyurqahayin/09.02.2016/; **Սաֆարյան Գ., Պողոսյան Ռ., Ղազանչյան Լ.,** նշվ. աշխ.:

[8] Մանրամասն տե՛ս ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» (16.11.1995թ.),http://www.parliament.am/ legislation. php?sel=show&ID= 1731&lang=arm/22.09.2017/; ՀՀ օրենք «Օտարերկրացիների մասին» (16.01.2007թ.,) http://www. parliament.am/l egislation.php?sel=show&ID=2861&lang=arm/12.11.2017/:

կան կամ հյուպատոսական մարմինների աջակցությունը[9]: Այնուամենայնիվ, ընդհանուր կանոնի համաձայն՝ տվյալ իրավական կարգավիճակում գտնվող անձանց բնակության երկրի կողմից շնորհվում է հատուկ կարգավիճակ, որը, որպես կանոն, համապատասխանում է օտարերկրացիների կարգավիճակին: Ավելին, «Ապաքաղաքացիների կարգավիճակի մասին» 1954թ. կոնվենցիայի հոդվ. 2-ի համաձայն, ապաքաղաքացիները պարտավորություն են կրում այն երկրի հանդեպ, որի տարածքում ապրում են, միաժամանակ հասարակական կարգի պահպանման նպատակով նաև պետք է ենթարկվեն այդ երկրում գործող օրենքներին ու որոշումներին: Նշված կոնվենցիայի պահանջներին համապատասխան, որոշ դեպքերում ապաքաղաքացիները, հիմնվելով իրավահավասարության սկզբունքի վրա, կարող են օգտվել տվյալ երկրի քաղաքացիներին պատկանող որոշ իրավունքներից, որոնցից են՝ նախնական կրթություն ստանալու (հոդվ. 22, 1-ին մաս), կառավարության կողմից օգնություն և աջակցություն ստանալու (հոդվ. 23) իրավունքները: Կարծում ենք, որ ապաքաղաքացիության վիճակի վերացումը ՄԱԿ-ի անդամ-պետություններից յուրաքանչյուրի պարտքն է, քանի որ երկրում այդպիսի վիճակի առկայությունը խոչընդոտում է անձի կողմից իր իրավունքների և ազատությունների լիարժեք իրացումը: Ավելին, ապաքաղաքացիության հիմնախնդիրն օժտված է և՛ իրավական, և՛ քաղաքական բնույթով, քանզի անմիջականորեն ազդում է անձի իրավական դրության յուրաքանչյուր տարրի վրա: Այդ է պատճառը, որ ՄԱԿ-ի «Ապաքաղաքացիության կրճատման մասին» կոնվենցիայի (30.08. 1961թ.) հոդվ. 1-ն ամրագրում է անդամ-պետությունների պարտավորությունը քաղաքացիություն շնորհել իրենց տարածքում ծնված յուրաքանչյուր անձի: ***Փախըստականն*** այն անձն է, որը ռասայական, կրոնական որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական համոզմունքների, հետապնդումների զոհ դառնալու միանգամայն հիմնավոր երկյուղի պատճառով գտնվում է քաղաքացիական պատկանելության երկրից դուրս և չի կարող օգտվել այդ պաշտպանությունից՝ հիշատակված երկյուղի պատճառով կամ չունենալով որոշակի քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության

[9] Տե՛ս **Ղազանչյան Լ.,** Անձի իրավական դրության հիմնախնդիրները ժողովրդավարական իրավական պետությունում (տեսական-իրավական վերլուծություն), Երևան, 2015, էջ 144-146: Նույնի՝ Անձի իրավական դրություն. Տեսական-իրավական վերլուծություն, Երևան, 2016, էջ 240-242:

վայրից դուրս, չի կարող կամ չի կամենում վերադառնալ այդ երկիրն այդպիսի երկյուղի պատճառով[10]:

СТАТУС ИНОСТРАНЦЕВ, БЕЖЕНЦЕВ И АПАТРИДОВ В КОНТЕКСТЕ ПРАВОВОГО ПОЛОЖЕНИЯ ЛИЧНОСТИ

ЛИЛИТ КАЗАНЧЯН

В данной научной статье автор подробно рассматривает особенности статуса иностранцев, беженцев и апатридов в контексте правового положения личности. В частности, раскрываются существующие между этими понятиями общности и различия, которые оказывают существенное влияние на реализацию прав, свобод и законных интересов личности.

Ключевые слова – правовое положение, государство, общество, права, иностранец, апатрид, двойное гражданство, беженец.

THE STATUS OF FOREIGNERS, REFUGEES AND STATELESS PERSONS IN REGARD TO THE LEGAL STATUS OF AN INDIVIDUAL

LILIT KAZANCHIAN

In this article Lilit Kazanchian considers the particularities of the status of foreigners, refugees and stateless persons in regard to the presentation of the legal status of an individual. In particular, Kazanchian reveals the similarities and differences existing between these understandings that have a significant impact on implementing the rights, freedoms and lawful interests of individuals.

Key words – legal status, state, society, rights, foreigner, stateless person, dual citizenship, refuge.

---

[10] Տե՛ս ՀՀ օրենք «Փախստականների և ապաստանի մասին» (27.11.2008թ.), հոդվ. 6, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3422&lang=arm/12.09.2017/; Տե՛ս նաև՝ **Андриченко Л.В., Белоусова Е.В.** Беженцы и вынужденные переселенцы (правовые проблемы) // Государство и право, 1995, № 5, стр. 45-63: